«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը մայրենիի դասավանդման ընթացքում՝ կրտսեր դպրոցի օրինակով»
Առարկա	Դասվար
Ուսուցիչ	Լուսինե Հակոբյան
Մարզ	Երևան
Ուս. Հաստատություն	«Երևանի Մ. Մելքոնյանի անվ. N 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ 1. ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

1.1 Ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը տարրական դասարաններում՝ որպես սովորողի առաջադիմության ու մոտիվացիայի բարձրացման միջոց.....6

1.2 Կրտսեր դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման հնարավորությունները մայրենիի դասագործընթացում.....13

ԳԼՈՒԽ 2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

2.1 Ինտերակտիվ ուսուցման ազդեցությունը կրտսեր դպրոցականների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման վրա՝ մայրենիի դասավանդման օրինակով.....16

Եզրակացություններ.....20

Օգտագործված գրականության ցանկ..... 21

Հավելված.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական դպրոցում ստացած գիտելիքը, հմտություններն ու կարողությունները, սոցիալական միջավայրի հետ հաղորդակցումը անձի ինքնաճանաչման, աշխարհաճանաչողության, ներանձնային և միջանձնային հարաբերությունների կառուցման հիմքն են հանդիսանում: Հասարակության լիիրավ անդամը համարվելու համար մարդը պետք է ունենա գիտելիքների, կարողունակությունների որոշակի պաշար, որպեսզի կարողանա կազմակերպել իր կենսագործունեությունը: Սա հանրակրթության հիմնական նպատակն է: Այս համատեքստում կրթությունը իրականացնողների՝ ուսուցիչների վրա մեծ պարտականություն է դրված հատկապես կրտսեր դպրոցականների հետ տարվող մանկավարժական աշխատանքում՝ հաշվի առնելով վերջիններիս տարիքային աանձնահատկությունները, վարքային տարատեսակ դրսևորումները:

Նկատենք, որ արդի կրթական բարեփոխումներով պայմանավորված՝ մանկավարժական աշխատողները պետք է արդյունավետորեն ընդառաջ գնան կրթական նորարարություններին, դասի պլանավորման և իրականացման արդի պահանջներին, ընտրեն առավել արդյունավետ ու կարողունակահեն դասավանդման մեթոդներ ու մոտեցումներ, որպեսզի ապահովեն կրտսեր դպրոցականների առաջադիմությունը, սովորելու մոտիվացիան, ինքնուրույն գործելու և նախաձեռնողի դերում հանդես գալու հնարավորությունները, ինչպես նաև ստեղծեն ստեղծագործական ունակությունների զարգացման համար նպաստավոր պայմաններ: Սրանք մանկավարժական խնդիրներ են, որոնց նպատակային իրականացումը մեծապես կարող է նպաստել կրթության որակի բարձրացմանը, դասին սովորողների մասնակցելիության, մոտիվացիայի խթանմանը: Այս համատեքստում ուսուցիչը պետք է.

- Ապահովի կրթական բարեփոխումներին համապատասխան կրթության որակ
- Բացահայտի ու բավարարի ժամանակակից կրտսեր դպրոցականների կրթական պահանջմունքները, հետաքրքրություններն ու նախասիրությունները
- Դասավանդման ընթացքում նախապատվություն տա ուսուցման ժամանակակից մեթոդներին, կիրառի ՏՀՏ տեխնոլոգիաներ, պլանավորի և անցկացնի ոչ ֆորմալ դասեր, նախագծային, հետազոտական աշխատանքներ
- Հաշվի նստի սովորողների օժտվածության, առանձնահատուկ կարիքների հետ՝ կիրառելով անհատակողմնորոշիչ մանկավարժական մոտեցումներ

Այս և մի շարք այլ գործոններ ուսուցչի համար սեփական ներուժն օգտագործելու մոտիվացիա են առաջացնում, ստիպում են նրան վերանայել իր աշխատանքային զինանոցում եղած գործիքները՝ մեթոդները, աշխատառճը, գիտելիքները, այլապես ձախողումն անխուսափելի կլինի: Ինչպես հայտնի է, կրտսեր դպրոցական տարիքը այն հենասյունն է, որի վրա կառուցվում է սովորողի հետագա կրթական առաջընթացը, ուստի դասվարը պետք է դասը պլանավորի՝ հաշվի առնելով մի շարք սկզբունքներ և առանձնահատկություններ, որոնց հենքի վրա էլ պիտի կառուցվի ուսումնական գործընթացը՝ կարևորելով ստեղծարար, ինքնուրույն և նախաձեռնող սովորող ունենալու գաղափարը: Այսպիսով, աներկբա է, որ նոր ժամանակների կրթական համակարգն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցից առանցքայինը սովորողին լսելն է, մեխանիկական վերարտադրությունից զերծ պահելը, նրա ակտիվ դերի ու մասնակցության կարևորումը դասին, տեսական ու գործնական մասի արդյունավետ ու նպատակային համադրումը: Այսպես ուսուցիչը խթանում է աշխարհը նոր ճանաչող կրտսեր դպրոցականի հետազոտելու, նախագծելու և ուսումնասիրելու կարողությունները, սովորողին հնարավորություն տալիս սոցիալականացվել, համագործակցային հարաբերություններ հաստատել դասընկերների հետ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է մայրենիի դասերի կազմակերպման բազմազանության և արդյունավետության բարձրացման, ինչպես նաև մշտական կատարելագործման ու արդիականացման անհրաժեշտությամբ, ինչը թույլ կտա ունենալ ստեղծարար, ինքնուրույն և նախաձեռնող կրտսեր դպրոցականներ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել մայրենիի դասագործընթացում սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման մանկավարժական պայմաններն ու մոտեցումները:

Ուսումնասիրության խնդիրներն են.

- վերլուծել թեմային վերաբերող տարատեսակ մասնագիտական գրականություն
- ուսումնասիրել սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման մանկավարժական պայմանները:
- դիտարկել ժամանակակից տեխնոլոգիաների դերը՝ մայրենիի դասագործընթացն առավել շարժուն ու դինամիկ դարձնելու առումով

- փորձարարական դասի օրինակով ընդհանրացնել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների դերը՝ սովորեղների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման համատեքստում:

Աշխատանքի կիրառական նշանակությունը Հաշվի առնելով հետազոտական աշխատանքի արդիականությունը՝ այն կարող է օժանդակ մեթոդական նյութ հանդիսանալ դասավանդող ուսուցիչների համար:

Հետազոտության ընթացքում գործադրված մեթոդները՝

1. գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,
2. դասալսումներ և վերլուծություններ,
3. փորձարարական դասերի վարում,

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, տեսական և գործնական ուսումնասիրություններից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ԳԼՈՒԽ 1.
ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

1.1 Ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը տարրական դասարաններում՝ որպես սովորողի առաջադիմության ու մոտիվացիայի բարձրացման միջոց

Ներկայումս իրականացվող կրթական բարեփոխումներն ու բարելավումները պահանջում են, որ ուսուցիչներն ունենան մասնագիտական ու մեթոդական այնպիսի պատրաստվածություն, ինչը թույլ կտա արդյունավետ, ժամանակակից կրթական միտումներին համապատասխան կազմակերպել սովորողների ուսուցման ու դաստիարակության մանկավարժական խնդիրները: Այս ամենը ենթադրում է, որ ժամանակակից ուսուցիչը պետք է լայնորեն կիրառի ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, ընդառաջ գնա կրթական ոլորտի նորարարություններին՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողների կարողունակությունները, խթանել ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը, ապահովել ստեղծագործական միջավայր:

Այս նպատակներին հասնելու առանցքում ուսուցման աշակերտակենտրոն մոդելն է, որի հիմնական բաղադրիչներից են փոխգործուն մեթոդամանկավարժական հնարները, նախագծային, հետազոտական աշխատանքները, ոչ ֆորմալ դասերը, որոնք ունակ են փոխել սովորողների տրամադրվածությունը ուսումնական գործընթացի հանդեպ՝ հաճախակի նկատվող ձանձրույթն ու հոգնածությունը փոխարինելով ակտիվությամբ ու նախաձեռնությամբ: Ուսուցման հանդեպ այս համալիր բարելավումները կարող են ապահովել սովորողի համար աջակցող կրթական միջավայր, որտեղ վերջինս հնարավորություն կունենա համագործակցելու դասընկերների հետ, երևակայելու, ստեղծագործելու, հետազոտելու, կարծիք ձևավորելու և արտահայտելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու: Շատ կարևոր է, որ կրտսեր դպրոցականը կարողանա ինքնուրույ գործել թե' դասարանում, թե' տանը՝ տնային առաջադրանքները կատարելիս: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է խոսուն քայլեր կատարել հենց կրտսեր դպրոցից սկսած, քանի որ կյանքի այս շրջափուլում է ձևավորվում սովորողների աշխարհընկալումն ու տեղի ունենում սոցիալականացման հիմնական գործընթացը:

Ինքնուրույնության զարգացումը ենթադրում է սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունների ձևավորում. «Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն[1]», իսկ ահա ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության ձևավորումը ենթադրում է, որ սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում: Սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից[2]:

Ուսումնական գործունեության արդյունավետությունը, աշակերտների վերաբերմունքը ուսման նկատմամբ և նրանց բոլոր հաջողությունները հետագա գործունեության ընթացքում պայմանավորված են նաև մանկավարժահոգեբանական առանձնահատկություններով: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն ունեն կոնկրետ՝ առարկայական մտածողություն. նրանք ավելի դյուրին են ընկալում, հասկանում և յուրացնում այն, ինչ կապված է իրենց կենսափորձի հետ, ինչ տեսել են, զգացել, ըմբռնել և կատարել են: Նրանց մտածողությունը ձևերով, գույներով և ձայներով է: Կրտսեր դպրոցական տարիքը ճանաչողական գործունեության ակտիվացման փուլ է. նրանք սկսում են հետաքրքրվել և իրականացնել մտավոր պարապմունքներ, իրենց ունեցած և նոր յուրացրած գիտելիքները կիրառել նոր պայմաններում, պարզ եզրահանգումներ անել և այլն[3]: Գիտական հասկացությունների ձևավորման գործընթացում զարգանում են երեխայի մտածողության բոլոր գործընթացները[4]:

Հաշվի առնելով կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները՝ պետք է ուսուցման գործընթացը կազմակերպել՝

[1] ՀՀ Կառավարության՝ 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշում:
[2] ՀՀ Կառավարության՝ 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշում:
[3] Գյուլամիրյան Ձ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան 2018, էջ 21:
[4] Պետրովսկի Ա. Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն,Երևան 1977, էջ 283:

օգտագործելով երեխաների բոլոր զգայարանները. ուսուցիչն ավելի քիչ պիտի խոսի, ավելի շատ ցուցադրի, ավելի քիչ կատարի, ավելի շատ մասնակից դարձնի: Պետք է սովորողներին առաջարկել մտածել այն մասին, ինչը հարազատ է իրենց, հատուկ է իրենց տարիքին, պատմել այն մասին, ինչ իրենց հետ է տեղի ունեցել, հակառակ դեպքում՝ կդժվարանան հանձնարարված առաջադրանքները: Անհրաժեշտ է, որ ուսուցիչները ճիշտ բացահայտեն իրենց աշակերտների ուժեղ ու թույլ կողմերը, ընդունակությունները, տարիքային և անհատական առանձնահատկությունները, ուսման նկատմամբ վերաբերմունքը, մոտիվացիան[5]: Հարկ է նաև հաշվի առնել, որ ուսուցման գործընթացի սկզբնական շրջանում կրտսեր դպրոցականների ընկալման մակարդակը սերտորեն պայմանավորված է նրանց գործողություններով և պրակտիկ գործունեությամբ: Այս տարիքի սովորողների բնորոշ է ցայտուն արտահայտված հուզականությունը, ուշադրության ապակենտրոնացումը, ուստի դասապրոցեսին առաջ է գալիս նաև զննականության սկզբունքի ապահովման անհրաժեշտություն, ինչը կարող է նպաստել, որ դպրոցականների ընկալումն աստիճանաբար դառնա նպատակաուղղված ու կառավարվող:

Պետք է հաշվի առնել, որ գիտելիքի հաղորդմանը զուգահեռ, անչափ կարևոր է այդ գիտելիքի իրացումը գործնականում: Այստեղ կարևոր են տեսական գիտելիքների գործնական կիրառման հնարավորությունները սովորողների համար: Կարող ենք ասել, որ միայն տեսական գիտելիքը որևէ հիմնաքարային ազդեցություն չի կարող ունենալ սովորողի իմացական կարողություններն ամրապնտելու առումով, քանի որ գործնական պարապունքների բացակայության պարագայում, սովորողի մոտ ուսուցանվող նյութը կունենա մեխանիկական բնույթ: Բացի դա, գործնական առաջադրանքները նույնպես նպաստում են, որ կրտսեր դպրոցականները հարմարվեն ինքնուրույն գործունեությանը, առավել քիչ կախված լինեն ուսուցչից: Կրտսեր դպրոցական տարիքում առանձնակի կարևոր է նաև զարգացնել նախաձեռնողականությունը: Նախաձեռնությունը նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է, ուստի կարևոր է, որ աշակերտը ինքնուրույն եզրահանգումներ կատարի, հանդս գա սեփական առաջարկություններով, խաղային իրավիճայկենում, դերախաղի ժամանակ նախաձեռնող լինի: Ժամանակակից կրթությունը հիմնախնդիրներից է ստեղծագործ, անկախ գործող, նախաձեռնող ու նախագծող սերնդի ձևավորումը: Այս սկզբունքներն ամրագրված են նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենում. «Մանկավարժական աշխատողը պարտավոր է սովորողների

[5] «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Ա. Ղազարոսյան, «Ուսուցիչը՝ ուսումնական գործընթացի կազմակերպիչ», Երևան, 2019, էջ 24:

մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ»[6]:

Կրտսեր դպրոցականների ինքնուրույնության ու նախաձեռնության խթանման վրա իր ուղիղ ազդեցությունն ունի ուսուցիչի կերպարը, նրա մասնագիտական ու մեթոդական պատրաստվածությունը, մանկավարժական էթիկան, դասի պլանավորման հմտությունները: Այս համատեքստում է, որ կրկին կցանկանանք կարևորել նորարար ուսուցիչ ունենալու գաղափարը: Ուսուցիչն ինքը պետք է լինի ստեղծարար, նախաձեռնող, որպեսզի կարողանա հետաքրքիր ու դինամիկ դասապրոցես ապահովել:

Ուսուցչի մասնագիտական որակներն են՝

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն;
- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն;
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն;
- կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն և այլն [7]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Նա պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ: « Մանկավարժական աշխատողը պարտավոր է հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ[8]»: Կրթության որակի

[6] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27. կետ 2. 10:
[7] Թոփուզյան Ա., Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», էջ 13:

[8] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 2.5:

բարձրացման, սովորողի մեջ առաջնային կարողությունների ձևավորման համար կարևոր է նաև կրթության բովանդակությունը: Կրթության բովանդակությունը նորմատիվային փաստաթղթերի, ուսումնական նյութերի ամբողջություն է, որի մեջ ամփոփված է ի՞նչ ենք սովորեցնում հարցը: Այդ հարցը հատկապես էական է դառնում արագ փոփոխվող աշխարհում, քանի որ ժամանակի պահանջներին չհամապատասխանող բովանդակությունը չի կարող մոտիվացնել այսօրվա սովորողին[9]: Կրթական նորարարությունները չեն շրջանցել նաև այս համատեքստը: Կարծում ենք, որ դասագրքերի արդիականացումը իր նպաստը կբերի, որ սովորողները դասին դառնան առավել ինքնուրույն ու նախաձեռնող:

Հոգեբանական տեսանկյունից կրտսեր դպրոցական տարիքը կարելի է համարել բարենպաստ սովորողի մոտ ստեղծարարության, նախաձեռնության զարգացման, սեփական մտքերն ու հետաքրքրությունները դասի ընթացք բերելու համար, քանի որ տարիքային այս կատեգորիայի մոտ ընգծված կերպով է արտահայտված աշխարհը ճանաչելու, ինքնուրույն գործելու, մեծերի ներգործությունը թուլացնելու ցանկությունը: Այնուամենայնիվ, աներկբա է, որ այս գործընթացի վրա էականորեն ազդում է երեխայի հարաբերությունների համակարգը ծնողների, ուսուցիչների, հասակակիցների հետ, ուստի վերջինիս ցանկությունների ու հետաքրքրությունների սահմանափակումը ուսուցչի կողմից կարելի է դիտարկել մանկավարժական սխալ մոտեցում: Շատ կարևոր է ուսուցման գործընթացում ուսուցչի կողմից ստեղծված բարոյահոգեբանական բարենպաստ միջավայրը: Առանց այս հանգամանքի, ուսուցման ընթացքը հնարավոր չէ անցնցում կառավարել, ցույց տալ սովորողներին իրենց դերերն ու պարտավորությունները: Որպեսզի մանկավարժները դասարանում կարողանան ստեղծել հոգեբանական բարենպաստ մթնոլորտ, նրանք պետք է իմանան դրանց բնութագրիչները: Դրանցից են.

1. Դասարանում երեխաների միջև առկա են աշխույժ, բարիդրացիական փոխհարաբերություններ, լավտեսական տրամադրություն, փոխհամագործակցություն: Նրանք հաճույքով են կատարում խմբային աշխատանքներ: Հարաբերություններում գերակայում է խրախուսումը, իսկ քննադատությունն իրականացվում է նուրբ տոնով:
2. Դասարանում իշխում է հարգանքի մթնոլորտ: Այստեղ մշտապես բոլորն իրենց պաշտպանված են զգում:

[9] https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան 2013, էջ 13:

3. Դասարանում բարձր են գնահատվում անձի այնպիսի որակները, ինչպիսիք են՝ պատասխանատվությունը, աշխատասիրությունը, արդարամտությունը, անշահախնդրությունը և այլն:
4. Սովորողներն ակտիվ են, աշխույժ: Նրանք արագ արձագանքում են, եթե պետք է ինչ-որ օգտավետ աշխատանք կատարել[10]:

Ստացվում է, որ ուսուցչի և սովորողների միջև արդյունավետ փոխգործակցության, եկուստեք ցուցաբերած սոցիալական ակտիվության, հարգանքի առկայության պայմաններում դասը կարող է միմյան շահել, քանի որ բարոյահոգեբանական կայուն մթնոլորտում հնարավոր է հասնել նոր կարողությունների ու հմտությունների ամրակայմանը, որոնք սովորողը ձեռք է բերում ուսումնառության ընթացքում:

Կրտսեր դպրոցականի մոտ ինքնուրույնության ու նախաձեռնության զարգացման համար կարևոր է վերջինիս սոցիալականացումը: Սոցիալական ակտիվություն հասկացությունը արտացոլում է անձի գործելու բնույթը սոցիալական խմբում, հասարակության մեջ: Այդ ակտիվությունը կապված է այն բանի հետ, երբ անձի հետաքրքրությունները դառնում են ակտիվ գործելու պատճառ, երբ նրա աշխարհաճանաչման ձգտումներն ու նպատակադրումները ուղղվում են իրականության վերափոխմանը: Անձի ակտիվության հիմնական պատճառն այն է, որ հակասություններ են ստեղծվում նրա կենսապայմանների ու օբյեկտիվ պահանջմունքների միջև, և նա ակտիվանում է այդ անհամապատասխանությունը հաղթահարելու համար[11]: Այս համատեքստում ուսուցիչը պետք է խրախուսի, ոգևորի, գովի սովորողին, ընդգծի ոչ թե սխալներն ու բացթողումները, այլ առավելություններն ու ձեռքբերումները: Նմանօրինակ մանկավարժական մոտեցումը հենց այն ուղին է, որով կարելի է շահել սովորողի վստահությունը, բերել նրան կառավարելի դաշտ: Պետք է փաստել, որ ծավալուն ու երկար շարադրանքը, ուսուցչակենտրոն ուսուցումը, որտեղ սովորողները հիմնականում պասիվ դերում են, ոչ միշտ են հանգեցնում այն վերջնարդյունքներին, որոնք սահմանված են կրթության պետական չափորոշչով, ուստի կարևոր ենք համարում ընդառաջ գնալ դեպի կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթություն:

Կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունն ուղղված է սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք

[10] http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», Երևան, 2013, էջ 10:
[11] http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/Arzumanyan.pdf Արզումանյան Ս., Հոգեբանություն, Երևան, 2003, էջ 65:

բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերի ուսուցմանը: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից[12]:

Այսպիսով, առաջնահերթություն համարելով սովորողի ինքնուրույնության ու նախաձեռնության զարգացումը՝ կարծում ենք, որ սովորողները պետք է դառնան ուսումնական գործընթացի գործընկերային կողմ՝ իրենց դերերով, պատասխանատվությամբ, նորորանրությամբ ու մասնակցությամբ: Մանկավարժական այս մոտեցումը ժամանակի ընթացքում հնարավորություն կտա լուծել մեր առջև դրած խնդիրը, այն է՝ սովորողի մոտ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ:

[12] ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում:

1.2 Կրտսեր դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման հնարավորությունները մայրենիի դասագործընթացում

Ուսումնական գործընթացում, ի թիվս մի շարք խնդիրների, հատկապես կարևորվում է ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը հանրակրթական դպրոցի տարրական օղակում: Գերխնդիր է դարձել այն հարցադրումը, թե ի՞նչ եղանակներով ու մեթոդներով է հնարավոր զարգացնել սովորողի ստեղծագործական ունակությունները, որն ինքնին ենթադրում է երևակայելու, հետաքրքրվելու, նորարար ու ինքնատիպ գործելու կարողությունների ամբողջություն: Կրտսեր դպրոցական տարիքի աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացումը կարևոր հանգամանք է՝ ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու հարցում: Դա, թերևս, լավագույն միջոցն է դուրս գալու կաղապարված մտածելակերպից, ընդլայնելու երևակայությունը, պատկերավոր մտածողությունը:

Մայրենիի դասերին սովորողի դերը պետք է լինի հնարավորինս մասնակցային, նա պետք է անընդհատ լինի գործունեության մեջ: Այս նպատակներից ելնելով է, որ ուսուցիչը պետք է հաճախ դիմի նորարարական մեթոդների, որոնք թույլ կտան ապահովել դասի դինամիկան և սովորողների համաչափ մասնակցությունը դասապրոցեսին: Կարելի է պնդել, որ կրտսեր դպրոցում սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացման համար բավականին արդյունավետ է ինտերակտիվ ուսուցումը, քանի որ նման ուսուցման հիմքում սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունն է, ինչպես նաև գիտելիքի ձեռքբերման ընթացքին նրա անմիջական ու գործուն մասնակցությունը: Բազմաթիվ հիմնական մեթոդական նորարարություններ այսօր կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր, ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի: Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին: Դասավանդման ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցչի ֆունկցիաներն են՝

- Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:

- Բաժանել սովորողներին խմբերի և տալ հանձնարարություններ:
- Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:
- Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող ուսանողը
- Օգնել սովորողներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ և ընդհանուր նշանակություն»[13]:

Այս մոտեցումը ուսումնական գործընթացին թույլ կտա առարկաների ուսումնասիրությունը դարձնել սովորողին հասանելի, դրանց շրջանակներում բացահայտել աշխարհը, մարդկանց, երևույթները նորովի, ուստի սովորողը հնարավորություն կունենա կոնկրետ առարկայի ուսումնասիրության ընթացքում զարգացնել նաև ստեղծագործական ունակություններ: Ինտերակտիվ ուսուցումը ենթադրում է երկխոսության միջոցով շփման կազմակերպում և զարգացում, որը նպաստում է փոխհասկացվածությամբ և փոխներգործությամբ յուրաքանչյուրի համար անհատապես կարևոր խնդիրների լուծմանը[14]: Ինտերակտիվ կամ փախներգործուն մեթոդամանկավարժական հնարներից մայրենիի դասին կարելի է կիրառել ներքոբերյալ մեթոդները, որոնք կարող են նպաստել նաև սովորողների ստեղծագործականության զարգացմանը.

- Մտագրոհ
- Մ-աձև աղյուսակ
- Մտքերի քարտեզագրում
- Շրջագայություն անցած թեմաների էջերով
- ԳՈՒՍ և այլն

Այսպիսով, կարելի է փաստել, որ տարրական դասարաններում մայրենիի դասավանդման շրջանակներում փոխներգործուն մեթոդների կիրառումը կարող է նպաստել, որ սովորողը պասիվ դաշտից դուրս գա, մշտապես ունենա զբաղվածություն, համագործակցի դասընկերների հետ, ինչն էլ թույլ կտա որ վերջիններիս մոտ ձևավորվի կոլեկտիվ մտածողություն, դժվարությունները թիմային աշխատանքով հաղթահարելու կարողություն: Շատ կարևոր է մայրենիի դասաժամի ընթացքում պայմաններ ստեղծել, որ դասի ընթացքում սովորողի դերը լինի ավելի ակտիվ, նա ուղղակի կերպով լինի դասի ընթացքի կենտրոնում,

[13] http://armedin.am/wp-content/uploads/ «Ակտիվ, ինտերակտիվ ուսուցման մեթոդներ»:
[14] Ալեքսանյան Լ.,Թորոսյան Ն.,Պետրոսյան Մ., «Ուսուցման ինտերակտրվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան», Երևան, 2004, էջ 26:

հնարավորինս շատ խոսի, մեկնաբանի, կարծիք հայտնի: Ակտիվ խոսքը հնարավորություն է տալիս, որ սովորողն ավելի արագ զարգացնի կապակցված խոսքը, հղկի, կոկի, գեղեցկացնի այն: Անշուշտ, կապակցված խոսքին դրական հատկանիշներ տալու համար հարկ է, որ դրան նախորդած մյուս փուլերը՝ լեզվական հիմնական միավորների ուսուցումը, բառային ֆոնդի հարստացումը, քերականական կառուցվածքի ձևավորումը նույնպես իրականացված լինեն արդյունավետ, քանի որ հենց այս հենքի վրա է, որ սովորողն ունենում է լիարժեք կապակցված խոսք: Կրտսեր դպրոցականների ստեղծագործական ունակությունների վրա դրական են ազդում նաև խաղային տեխնոլոգիաները: Հայտնի է, որ խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և մարդուն ուղեկցում ողջ կյանքի ընթացքում: Անշուշտ, դիդակտիկ խաղերի միջոցով ուսուցումն ընթանում է խոսքի ուղեկցմամբ: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարող ենք պնդել, որ կրտսեր դպրոցում խաղային մեթոդներով ուսուցման ընթացքում կարելի է զարգացնել սովորողի կապակցված խոսքը, պատկերավոր մտածողությունը: Խաղային գործունեության մանկավարժական նշանակությունը երեխաների կյանքում կարևորել են Ա. Կոմենսկին, Ժ. Ռուսոն, Ֆ. Ֆրյոբելը մանկավարժներ Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը , Հ. Թումանյանը և այլք: Խ. Աբովյանը մանկավարժների հորդորում էր «չզրկել երեխային անմեղ խաղերից»: Հ. Թումանյանը գտնում էր, որ խաղը երեխայի բնական օրգանական պահանջն է, նրա էությունը:

Այսպիսով, կարծում ենք, որ մայրենի լեզվի դասագործընթացի պլանավորման հիմքում դնելով նորարարական տեխնոլոգիաներ՝ հնարավոր է ապահովել կրթական այնպիսի միջավայր, որը կնպաստի սովորողների մտքերի, զգացմունքների ու ապրումների արտահայտմանը, բանավոր խոսք կազմելու հմտության, ստեղծագործական ունակությունների զարգացմանը, դրանց հետագա մշակմանը:

ԳԼՈՒԽ 2

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

2.1 Ինտերակտիվ ուսուցման ազդեցությունը կրտսեր դպրոցականների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման վրա՝ մայրենիի դասավանդման օրինակով

Աշխատանքի այս ենթաբաժնում կցանկանանք կիսվել մեր մանկավարժական փորձով:

Մայրենիի դասագործընթացի շրջանակներում դիտարկենք ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման մի քանի օրինակներ, որոնք աներկբայորեն կարող են նպաստել նաև սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացմանը, ինքնուրույնության, նախաձեռնության խթանմանը: Օրինակ՝ երկրորդ դասարաններում՝ հանելուկների, առածների, ասացվածքների ուսուցման շրջանակներում, կարելի է կիրառել «Խճանկար» փոխներգործուն մեթոդը: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Խմբերը ստանում են առաջադրանքներ, միասին կատարում, ապա ներկայացնում համատեղ աշխատանքի արդյունքը:

Առաջադրանքներ

Աշխատանքի արդյունքում սովորողների մեջ կձևավորվի կոլեկտիվ մտածողություն, նրանք կփորձեն օգնել ու լրացնել միմյանց: Կարելի է նաև

հանձնարարել, որ սովորողները, իրար շարունակելով, կարդան փոքրիկ պատմությունը, բանաստեղծությունը, առակը, հեքիաթը, որից հետո երկսյուն աղյուսակում մեկ բառով հատկանշավորեն հերոսներին՝ զուգահեռ բանավոր կարծիք հայտնելով վերջիններիս արարքների մասին: Այսպես սովորողները կստանան հնարավորություն ստեղծագործական մոտենալու դասի ընթացքին, քանի որ յուրաքանչյուրը կարտահայտի իր կարծիքը: Այստեղ կցանկանանք կարևորել նաև խոսքային կարողությունների զարգացումն ու բառային պաշարի հարստացումը: Առաջին դասարանում «Գայլն ու ձին»[15] առակի ուսուցման ժամանակ ուսուցիչը կարող է գրատախտակին գծել երկսյուն աղյուսակ և խմբային աշխատանքի միջոցով հանձնարարել, որ սովորողները հատկանշավորեն գայլին և ձիուն:

Այս դեպքում նույնպես աշակերտները կաշխատեն խմբով, կօգնեն միմյանց, և արդյունքում՝ ողջ դասարանը ակտիվ կմասնակցի դասագործընթացին:

Հետաքրքիր տարբերակ է նաև քարտային աշխատանքը: Սովորողները կստանան անհատական քարտային առաջադրանքներ.

Շարունակիր միտքը, բանավոր ասա ևս 2-3 նախադասություն:



Որպեսզի վեր հանվեն և համակարգվեն սովորողների նախագիտելիքները բառակազմության, շարահյուսության վերաբերյալ, կարելի է կիրառել «Մտագրոհ» կամ «Մտքերի տարափ» փոխգործուն մեթոդական հնարը: Գրատախտակին ուսուցիչը կգծի Մ-աձև աղյուսակ և կխնդրի աշակերտների լրացնել այն:

[15] https://online.fliphtml5.com/fumf/zjyf/ Վ. Ա. Սարգսյան, «Այբբենարան»:

Աշխատանքը կիրականացվի շարքերով, աշակերտներին կտրամադրվի 3 րոպե ժամանակ: Յուրաքանչյուր շարքից աշակերտները հերթով կմոտենան գրատախտակին և կլրացնեն աղյուսակը: Աշխատանքի ավարտից հետո ուսուցիչը դեդուկտիվ եղանակով կխնդրի, որ յուրաքանչյուր շարք իր օրինակի հիման վրա մատնանշի տվյալ խմբի բառերին բնորոշ կանոնը: Այսպիսով, աշակերտները նախ կբերեն օրինակներ, ապա կմատնանշեն կանոնները:

ՊԱՐԶ	ԲԱՐԴ	ԱԾԱՆՑԱՎՈՐ
տուն	հացատուն	տնական անտուն

Որպեսզի բնականոն կերպով զարգանա աշակերտի խոսքային կարողությունը կարելի է կիրառել նաև հարցադրումների մեթոդը: Այս պարագայում ինտերակտիվ ուսուցման շրջանակներում կարելի է ստեղծել մի իրավիճակ, երբ աշակերտները կարող են միմյանց հարցեր տալ, իսկ հարց ձևակերպելու ընթացքում կզարգանա վերջիններիս ստեղծագործական ու պատկերավոր մտածողությունը ևս:

•Ինչու՞ ես կարծում, որ բարձրավանդակ բառը կազմությամբ բարդ է:
•Ո՞րն է գետափ և դեղատուփ բարդ բառերի տարբերությունը:
•Ո՞րն է ընկուզենի բառի արմատը:
•Ո՞րն է ծաղկանոց բառի ածանցը:
•Արան ածանցով կարո՞ղ ես բառ կազմել:
•Ձուկ արմատով կարո՞ղ ես բառ կազմել:

Հետաքրքիր ու արդյունավետ կլինի կիրառել նաև «Վեննի դիագրամ» մեթոդը: Օրինակ՝ որպեսզի աշակերտները կարողանան տարբերել հոդակապով և անհոդակապ բարդ բառերը, կարելի է խնդրել, որ դասագրքում ներառված բնագրերից գտնեն և դիագրամում գրառեն հոդակապով և անհոդակապ բարդ բառերը: Այսպես աշակերտի համար տեսանելի կլինի նշված շարքի բառերի նմանություններն ու տարբերությունները, իսկ արդյունքը կլինի այն, որ կզարգանա վերջիններիս համեմատելու, հակադրելու ունակությունը:

Այսպիսով, փոխգործուն մեթոդների կիրառությամբ պլանավորված դասերը բավականին արդյունավետ են, եթե ուսուցչի նպատակն է զարգացնել սովորողների ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը: Իհարկե, ավանդական եղանակով նույնպես կարելի է վարել դասը, զարգացնել ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, այնուամենայնիվ, հաշվի առնելով ժամանակակից սովորողների պահանջմունքները, կարծում ենք, որ ավելի շատ պետք է լսելի լինի հենց նրանց խոսքը, իրենք պետք է բացահայտեն այս կամ այն հմտությունը, կարողությունն ու գիտելիքը, անհատական կամ խմբային եղանակով պետք է հետազոտեն, պրպտեն, տեղեկություններ հավաքեն դասի թեմայի շուրջ, ներկայացնեն, բանակցեն ու ինքնադրսևորվեն: Այսպես մենք դեռ տարրական դասարաններից ենք խրախուսում սովորողի ինքնուրույնությունը, տալիս ենք նրան աշխարհը ճանաչել իրեն ցանկալի եղանակով:

Կարող ենք վստահաբար պնդել, որ ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, հետազոտական աշխատանքի թեմայի ուսումնասիրության արդյունքում կատարեցինք մի շարք եզրահանգումները, որոնք կներկայացնենք ստորև: Տարրական դասարանների ուսուցիչը ուսումնադաստիարակչական գործունեության բնագավառում պետք է.

- Իրականացնի ծրագրային առարկաների ուսուցման գործընթացը՝ համապատասխան կրթական ծրագրին ու չափորոշիչներին
- Ուսուցման շրջանակներում կիրառի ուսուցման ժամանակակից եղանակները, մեթոդները և միջոցները
- Անհատական մոտեցմամբ սովորողների մեջ արթնացնի սեր ու հետաքրքրություն սովորելու նկատմամբ
- Առարկայի ուսուցմանը զուգընթաց սովորողների մեջ ձևավորի հոգեկան, բարոյական արժեքներ, ինքնուրույնություն, նախաձեռնություն, ստեղծագործական ունակություններ
- Ոգևորի սովորողի նախաձեռնողական քայլերն ու ստեղծագործական ունակությունները, առարկայի ուսուցման շրջանակներում զարգացնի դրանք
- Դինամիկ, շարժուն դասապրոցեսի շնորհիվ բարձրացնի սովորողների աշխատունակությունը
- Սիրի իր աշխատանքն ու սաներին

Հանդես գանք մի քանի առաջարկություններով.

- Սովորողների մոտ առարկայի հանդեպ հետաքրքրության ու մոտիվացիայի բարձրացման համար կարելի է հաճախակի ներգրավել նրանց ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարման մեջ:
- Կարծում ենք, որ հարկավոր չէ ծանրաբեռնել կրտսեր դպրոցականներին ծավալուն տնային առաջադրանքներով, փոխարենը՝ կարելի է առավել շեշտադրել վերջիններիս ստեղծագործական գործունեությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. ՀՀ Կառավարության՝ 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշում:
3. ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում:
4. Թոփուզյան Ա., Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»:
5. Գյուլամիրյան Ձ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան 2018:
6. Պետրովսկի Ա. Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն,Երևան 1977:
7. «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Ա. Ղազարոսյան, «Ուսուցիչը՝ ուսումնական գործընթացի կազմակերպիչ», Երևան, 2019:
8. Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան 2013:
9. Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», Երևան, 2013:
10. Արզումանյան Ս., Հոգեբանություն, Երևան, 2003:
11. http://armedin.am/wp-content/uploads/ «Ակտիվ, ինտերակտիվ ուսուցման մեթոդներ»:
12. Ալեքսանյան Լ.,Թորոսյան Ն.,Պետրոսյան Մ., «Ուսուցման ինտերակտրվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան», Երևան, 2004:
13. https://online.fliphtml5.com/fumf/zjyf/ Վ. Ա. Սարգսյան, «Այբբենարան»:

ՀԱՎԵԼՎԱԾ

Կարողունակությունների ձևավորմանն ուղղված օրվա դասի պլանավորում

- **Առարկան՝** «Մայրենի»
- **Դասարանը՝** 3-րդ
- **Դասի թեման՝** «Աղվեսն ու վագրը» առակը, հոմանիշ բառեր
- **Դասի տիպը՝** Ամփոփման, գիտելիքների համակարգման դաս
- **Դասի կահավորումը՝**ցուցապաստառ, գրքեր, քարտեր
- **Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ և հնարներ՝** «ԳՈՒՍ», «Տ–աձև աղյուսակ «Մտագրոհ», ««Հինգրոպեանոց շարադրանք», «Խմբային քննարկումներ»:

Դասի նպատակները	• Ամփոփել սովորողների գիտելիքները առակի ժանրային առանձնահատկությունների վերաբերյալ: • Ամրապնդել գիտելիքները հոմանիշների շուրջ: • Զարգացնել արտահայտիչ ընթերցելու, պատմելու, վերլուծելու կարողությունները, խթանել հաղորդակցական հմտությունները, բանակցելու, բանավիճելու կարողությունները: • Զարգացնել սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական մտածողությունը: • Զարգացնել սովորողների լեզվամտածողությունն ու խոսքային կարողությունները: • Ձևավորել արժեքային համակարգ:
Դասի վերջնարդյունքները	• Մասնակցի քննարկումների, բանավեճերի, լսի և հասկանա արտահայտված մտքերը, ներկայացնի իր մոտեցումները, հանդես գա փաստարկված խոսքով: • Կազմի հոմանշային զույգեր: • Արդյունավետ համագործակցի և հաղորդակցվի ընկերների հետ՝ ստանձնելով որոշակի պատասխանատվություն խմբում արդյունավետ աշխատելու համատեքստում: • Հարգանքով վերաբերվի մարդկային բարձր որակներին, կարողանա հասկանալ առակի խրատական մասի էությունը: • Բարձր գնահատի և դրսևորի դրական վերաբերմունք առակագիրների

	ստեղծագործությունների նկատմամբ:
Ակնկալվող կարողունակություններ	• Լեզվական գրագիտություն և կարողունակություն • Սովորել սովորելու կարողունակություն • Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն • Մշակութային կարողունակություն
Դասի ընթացքը **Նախապատրաստում դասին, հաշվառում***/2 րոպե/* **1. Նոր նյութի հաղորդում** */10 րոպե/*	Մտագրոհի միջոցով կհամակարգենք աշակերտների մտքում առաջացած նախնական գիտելիքները առակների, դրանց ժանրային առանձնահատկությունների ու առակագիրների նկատմամբ: Սովորողները կընթերցեն գրատախտակին նախօրոք փակցված բանալի բառերը, կմեկնաբանեն: 
2.Նյութի ամրապնդում */15 րոպե/*	Ուսումնասիրված առակների բարոյախրատական իմաստն ամրապնդելու համար կանցկացվի խմբային աշխատանք՝ կիրառելով «Տ–աձև աղյուսակ» մեթոդական հնարը: Դասարանը կբաժանվի 4 խմբի, նրանցից յուրաքանչյուրին կբաժանվեն նախօրոք պատրաստված թղթեր: **Առաջադրանքի օրինակ:** Քո դասագրքի առակներից դու'րս գրիր դրական ու բացասական հերոսներին՝ տեղավորելով համապատասխան աղյուսակներում:  Դասի լեզվական նյութն ամրապնդելու համար ուսուցիչը կանցկացնի խմբային աշխատանք՝ դասարանը

	բաժանելով 3 խմբի: Յուրաքանչյուր խմբի կբաժանվեն նախօրոք պատրաստված քարտեր: **Առաջին խմբի առաջադրանք:** • **Առակից դու'րս գրեք հնգական միավանկ և բազմավանկ բառեր:** • **Գրե'ք բարեկամ, հեռու,լսել, զայրանալ բառերի հոմանիշները:** **Երկրորդ խմբի առաջադրանք:** • **Առակից դու'րս գրե'ք գաղտնավանկի «ը» ունեցող հինգ բառ և վանկատե'ք:** • **Գրե'ք լավ, տեսնել, զարհուրել բառերի հականիշները:**
3.Ուսումնական նյութի ամրապնդում */10 րոպե/*	Առակի բարոյախոսական իմաստն ամրապնդելու համար ուսուցիչը կանցկացնի խմբային քննարկում՝ թույլ տալով, որ սովորողները միմյանց հետ բանավիճեն, կարծիքներ փոխանակեն: Համապատասխան արդյունքները կգրանցվեն գրատախտակին: **Խորամանկ-** **Գոռոզ-** **Միամիտ-** **Պարծենկոտ** **Անխելք** **Բարի** **Չար**
4.Ուսումնական նյութի ամփոփում */8 րոպե/*	Առակների բուն գաղափարն ամփոփելու նկատառումներից ելնելով՝ հանձնարարել աշխատանք զույգերով՝ կիրառելով «Հինգրոպեանոց շարադրանք» հնարը: Սովորողները պետք է ազատ շարադրեն Հենրիկ Սևանի «Աղվեսն ու վագրը» առակն ու հարց ձևակերպեն հեղինակին՝ կիրառելով պատկերավորման միջոցներ: Այսպես թույլ է տրվում, որ սովորողը երևակայի,

<table>
<tr><td></td><td>ստեղծագործի, կազմի նախադասություններ:

Ի՞նչ տեսար
Ի՞նչ զգացիր
Ի՞նչ հասկացար
Ի՞նչ էր ուզում ինձ ասել Ավ. Իսահակյանը
Ո՞րն է «Կյանքից թանկ բանը»</td></tr>
<tr><td>**5.Գնահատում**</td><td>Սովորողները կիրականացնեն փոխադարձ գնահատում</td></tr>
<tr><td>6. Որպես տնային առաջադրանք՝ սովորողները կստանան ինքնագնահատման ռուբրիկներ, ինչը թույլ կտա ստեղծել հետադարձ կապ և սովորողներին համար ինքնանդրադարձի հնարավորություն: Ռուբրիկի արդյունքները կամփոփվեն հաջորդ դասին:</td><td>
<table>
<tr><td>Դասը հետաքրքի՞ր էր քեզ համար:</td><td>ԱՅՈ ՈՉ</td></tr>
<tr><td>Խմբային աշխատանքին ակտիվ մասնակցություն ունեցա՞ր:</td><td>ԱՅՈ ՈՉ</td></tr>
<tr><td>Առակների մասին ի՞նչ նոր բան իմացար:</td><td></td></tr>
<tr><td>Խոսիր քո դժվարություններից:</td><td></td></tr>
<tr><td>Ո՞ր առակագիրը քեզ դուր եկավ, հիմնավորի՛ր պատասխանդ:</td><td></td></tr>
<tr><td>Կարող ես պնդել, որ այս թեման դու լավ ես ընկալել, հիմնավորի՛ր պատասխանդ:</td><td></td></tr>
<tr><td>Կա՞ր մի բան, որ պակասում էր քեզ դասին:</td><td></td></tr>
</table>
</td></tr>
</table>